

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

14.03.2003թ.

ժ. 11<sup>00</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ն. Պողոսյան (*Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վարչության պետ*), Ռ. Ասլանյան (*Բիզնես ռեգիստրի բաժնի պետ*)

**Օրակարգի նախագծում` երկու հարց.**

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին.

*/Ջեկուցող` Ն. Պողոսյան, Վ. Դավթյան/*

2. Այլ հարցեր

2.1 «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը» հաստատելու մասին.

2.2 «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը» հաստատելու մասին.

*/Ջեկուցող` Գ. Անանյան/*

2.3 Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի մայիսի 29-ի թիվ 51 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*/Ջեկուցող` Գ. Անանյան/*

2.4 ՀՀ առողջապահության նախարարության Ձև թիվ 88 «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանություն տալու մասին.

*/Ներկայացնող` Յու. Պողոսյան/*

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին.

*/Ջեկուցող` Ն. Պողոսյան, Վ. Դավթյան/*

*Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության կողմից մշակված ՀՀ ԱՎԾ միասնական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսվում է վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման, վերլուծության և տարածման գործընթացների ավտոմատացում: Դրա հետ*

կապված ենթադրվում է միասնական մեթոդաբանական մոտեցման հիման վրա մշակել այդ նպատակի իրականացմանը միտված կիրառական ծրագրեր: Նախատեսվում է նաև միասնական կորպորատիվ համակարգչային ցանցի ստեղծում, որը կկապի բոլոր կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների տեղային ցանցերը: Մի շարք տարիների ընթացքում վիճակագրական տեղեկատվության համեմատման և պահպանման համար նախատեսվում է վիճակագրական տվյալների հիմնապաշարների ստեղծում: Նախատեսվող բոլոր աշխատանքները իրականացվելու են վիճակագրության ոլորտում վարվող քաղաքականությանը համապատասխան՝ հաշվի առնելով առկա պահանջներն ու սահմանափակումները:

Հայեցակարգում, համաձայն ՀՀ ՎՊԽ 2003 թվականի փետրվարի 17-ի թիվ 03 արձանագրային որոշմամբ տրված հանձնարարականների, կատարված են անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները:

**Որոշեցին՝** հաստատել «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգը»:

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2.1 «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը» հաստատելու մասին.

*/Չեկուցող՝ Գ. Անանյան/*

**Որոշեցին՝**

1. Հաստատել «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հուլիսի 23-ի «Վիճակագրական բիզնես /ձեռնարկատիրական/ ռեգիստրի տեղեկանք-հարցաթերթը» և «Իրավաբանական անձանց կողմից բիզնես /ձեռնարկատիրական/ ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող տեղեկանք հարցաթերթի լրացման հրահանգը» հաստատելու մասին թիվ 57 որոշումը:

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2.2 «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը» հաստատելու մասին.

*/Չեկուցող՝ Գ. Անանյան/*

**Որոշեցին՝** հաստատել «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը»:

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2.3 Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի մայիսի 29-ի թիվ 51 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*/Չեկուցող՝ Գ. Անանյան/*

Նշվեց, որ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ ՀՀ պետական եկամուտների նախարարությունը վերակազմավորվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության:

**Որոշեցին՝** Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 29 մայիսի 2001 թվականի թիվ 51 որոշմամբ հաստատված կարգի կետ 9-ի գ/ ենթակետի չորրորդ պարբերությունում կատարել հետևյալ փոփոխությունը. «ՀՀ պետական եկամուտների նախարարություն» բառերը փոխել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերով:

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2.4 ՀՀ առողջապահության նախարարության Ձև թիվ 88 «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

*/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/*

### **Որոշեցին՝**

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահության նախարարության Ձև թիվ 88 «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մարտի 27-ի «ՀՀ Առողջապահության նախարարության Ձև թիվ 88 «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանություն տալու մասին» թիվ 64 արձանագրային որոշումը:

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան